





մեծ մասամբ իրարու հակառակ։ Այսպիսի Բարբերական խառնակութեան մը տխուր հետևանքը դիւրին է գուշակել։

Մեք՝ դարաւոր դործածական լեզու ընդ ուղող կամ երազողներէն չենք. այդ բանը խիստ դժուարին կամ մանաւանդ անհնար կը թուի մեզ. բայց աշխարհաբառ լեզունիս դարաւորէն աւելի ևս հեռացնելու գաղափարին կամ դրութեան ալ կուսակից չենք. կուգենք որ մեր աշխարհիկ լեզուն՝ իւր արմատին հետ առնչութիւնը պահելով, և անոր օգտութեամբ ինքզինք օր քան զօր կատարեալագործելով, մեր նախնեաց, Արամայ, Տիգրանեաց, Վարդանեաց և Ներսիսեանց բարբառը բոլորովին շօտարանայ և անհասկանալի չըլլայ մեր սերնդոց, այն գեղեցիկ բարբառն, որ իւր ուրիշ առաւելութիւններէն զատ սա նշանաւոր հանգամանքն ալ ունի, որ, ինչպէս յայտնի է լեզուագիտաց, իւր կազմութեամբն աւելի կը մօտենայ Եւրոպական մշակեալ լեզուաց կազմութեան, քան թէ մեր արդի աշխարհաբառն, որ մեծ մասամբ Թուրքերէն է կազմութեամբ, և կանոնաւոր լեզուի մը պէտք եղած ամեն հանգամանքները գեւե չունի։

Ասոր հետ մէկտեղ, Եւրոպական մշակեալ լեզուաց գեղեցիկ ձևերն ու ոճերը մեր աշխարհաբառ լեզունին մէջ մտցնելու և զայն ճոխացնելու կամ վայելչացնելու գրութեան ալ դժմ չենք. Բնականական՝ կրնանք առանց անապարձութեան ըսել թէ Մասիսի խմբագիրը 27 տարին ի վեր ամենէն աւելի ծառայած է այս դրութեան, որով մեր աշխարհիկ լեզունին մէջ Եւրոպական լեզուաց ձևերն ու ոճերը բաւական յաղող կերպիւ կը փայլին այսօրուան օրս։

ԹՎԹԱԳՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

20 Մայիս 1878 Ձմեռին.

... Խմբագրապետ .

Ձմեռին, պատմական անցեալովը, փառաւոր ներկայովը՝ հին և նոր շէնքաղաք մ'է։

Քանի՜ քանի՜ ուղեգիրներէ և ուսումնական ճանապարհորդներէ յատկապէս հետազոտած, քննուած երկիր մը՝ չուգեցինք մեր մասնաւոր զբաղմանն ալ առարկայ ընել։

Տեղւոյն ընդհանուր վիճակին նկատմամբ քննական տեսութիւններ, վիճաւագրական հաշիւներ՝ թերևս արդէն ինքեզդրաց տաղտուկ պատճառէն։

Ազգային վիճակացոյց պատկերը միայն — որ ոչ նուազ կարևորութիւն ունի բանախորհրդեան առջև — նամականիք ոճով կը խոստանամ հրատարակել։

Անձնական նամակիս մէջ ըրած առաջադրութեանս համեմատ, ահա՛ այս անգամ՝ կը փութամ Ձմեռնական ժամանակադրականներու ցանկ մը յղել։

Ուղեւորական թղթակցութեան վերջին նամակս է այս։

Ուստի պարտ անձին կը համարիմ, կանխել հոս իմ խորին յարգանքներս և սրտաւոր չնորհակալիքս այն ամեն անոնց, որոնք առանձին իրենց համակիր և քաջալերական նամակներով՝ յատուկ յորդոր և զրդիւ եղան, պանդխտութեանս օրագրութիւնը հրատարակելու։

Չեմ կրնար նաև անյիշատակ թողուլ ձեր ցուցուցած մարդասիրական ասպնջն ջակնուկները։

Շնորհապարտ եմ, ... Տէր, որ Նիւթերու անհունութեան ժամանակ, երկարածիք թղթակցութիւններս՝ առանց թրիտելու, յապաւելու. առանց շաշն հողի, Մասիսի կարկառուն և ազգանուէր էջերուն մէջ ընդունեցիք սիրով։

Անընդհատ ճանապարհորդութեան պատճառաւ, եթէ երբեմն հապճեպով մեր կողմէն, երբեմն ալ տպագրութեան

կողմանէ, անուշադրութեամբ վրիպակներ սարգեցան մեր նամականւոյն մէջ, յատուկ ներողութիւն կը խնդրուի ընթերցող հասարակութենէն, քննադատ բանասէրէն։ Վասն զի եղան ժամանակներ, որ Խաչատուրյան փոստին հասցնելու համար՝ ստուերադիրները ձեռք զրկուեցան ի հրատարակութիւն։

Իրեւ գիտելիք՝ այսչափ։

Սխիւք ժամանակադրականներուն։

Գրեթէ բոլոր վիճակը թխադոյն մարտով ծածկուած է։ Ամբողջ արտեր չորացած են։

Մնչդեւ Բարձր. կուսակալը՝ ասկէց առաջ ամեն հեռատես միջոց ի գործ դրած էր։

Մարտիներուն հաւելիւթները ժողովուրդով իզմիր կը բերուէին։ Բեռներով ծովը կը նետուէին։

Տեղ տեղ՝ փոսերու մէջ կը թաղէին։ Եւ ահա՛ կրկին ամեն տեղէն լուրեր կուգան այսօրեա, որ ժողովուրդը՝ Խաչատուրյանի դաշտերը մարտահաւաքութեան եղած է։ ...

Տեղւոյն Գեր. Առաջնորդը՝ Անդր. լեզուաւ չնորհակալութեան առանձնական ուղեւոր մը պատասխանեց Պ. Տոնալտ—Մաքլէօս Հայասէր Անդրիանոյ պատմաբանին՝ Հայոց նկատմամբ դրած և Մասիսի մէջ թարգմանած այն համալից ընտիր յօդուածին։

Անուշախ Տիկին Թագուհի Խ. Զաքէեան, երեսուն և հինգ տարեկան հասակին մէջ կիցեց իւր մահկանացուն անցեալ շաբաթ օր, երեքամեայ միածին օրիորդիկ մը՝ որը թողով։

Վերափոխեալ Տիկինը՝ Ձմեռնիկ կը թաղ կանանց մէջ առաջին դիրքն ունէր, իւր բարեմոյն և եղական առաւելութիւններով։

Մեծ. Մանեան Գր. Սարգիս աղան՝ Ձմեռնիկ մէջ մեծ հուշակ ունի իւր մեկրատագործական թղթեայ ձեռնակերտներով։

Իւր համբաւը՝ արհեստական գործոցը հետ բաղդատմամբ, շատ քիչ գտայ։

Անձամբ տեսայ քանի մը գործքեր։

Արաբաբէ, Լեւոն—Մեքէ—Լեւոն, Լեւոն, ծաղկապսակ Թաղաբէ՝ իրենց տեսակին մէջ նոր էին։

Ուրախ եմ որ այս անգամ երկու ձեռակերտ քարտեղէ մկրատագործութիւններ ալ զրկած է Փարիզի տիեզերական աշխարհաշահէսին։

Եղիպտական Թուրքիայի մը, ալախօրիկ Կեղծանիկի մը։

Հանձարը քաջալերելու համար՝ ոչ միայն ժողովրդական ծախքեր, մրտենիներ պէտք են, այլ և գործնական ձեռնառնութիւն։

Անցեալ շաբաթ Պօսէն Աստուրիական անսովոր շոգեկան մ'եկաւ բաւական ճանապարհորդներ բերելով։

Քաղաքիս մէջ Կ. Պօսէն քաղաքական նախնեան նկատմամբ հասարակութիւնը վրդովեալ խօսքեր չըլլաւու համար խիստ զգուշութիւններ ձեռք առնուած են տեղական կառավարութեան կողմանէ։ Այս պատճառաւ յատուկ լրտեսներ որոշուած են ժողովուրդի և սրճատներէն մէջ։

Ս. Երեստաղձայ աթոռայն թարգման՝ Արժ. Վարդան վարդապետ Մամիկոնեան՝ օղափոխութեան պատճառաւ առժամանակեայ իզմիր եկած է, Ջերմուկները երթալու համար։ Բայց կը լսենք որ Պատրիարքարանի կողմանէ նորին արժանապատուութիւնը Մալ խնդրոյն համար քննիչ որոշուեր է։

Նորեկ տեսուչ Խիէկճեան էֆէնտի, երկսեռ գաղութաց համար ներքին քրեակոմ մը կը պարտադրուի։

Անշուշտ եմ որ Խիէկճեան էֆէնտի մեր բարեկամը, Ալաբէկեան, Ոսկանեան և Մամուրեան էֆէնտիներուն խումբադրած կարեւոր ծրագրերն ալ իւր լուրջ նկատողութեանը առարկայ պիտի ընէ։

Անուշախ լուրերն Մարթա Հայկալեան, Գրաբէ՛կ ըսուած երախայական հիւանդութեան համար զանազան նիւթերէ բաղդարեալ դեղ մը՝ ձրի կը մատակարարէ ամեն անոնց՝ որք ի հեռուստ և ի մօտաւոր իրեն կը դիմեն։

Այս փորձառական դեղը նորածին մանկանց շատերուն կենացը պատճառ ըլլալով՝ բազմութիւն ծնողաց չնորհապարտ

զգացմանցը վրայ անժխտելի իրաւունք ստացած է։ Փափաքելի է որ ուրիշ տեղեր ալ տարածուեր այս ընտանեկան գեղը։

Ձմեռնիկ մէջ հաստատուած Հայերէն տպարաններուն և հրատարակուած ազգային թերթերուն վիճակագրութիւնը հետաքննեցի։

Տեսայ 200 տարի յառաջ Ձմեռնիկ մէջ տպուած Եղիկի մը։ Կողքին վրայ ոչ գործարանի անուն կար, և ոչ յիշատակարան։

1845ին այրուած հին առաջնորդարանին մէջ տպագրական հին գործիքներ կը գտնուին եղբ. ...

Բողոքականները՝ երբեմն կոփիթ առնուն Հայերէն տպարան մ'ունեցած են։

1840ին Վի տպարանի Ստեփանոսի Պապօսեան անունով տիպ, և 1851ին Սիմոնաքեան Պ. Գալուստի գործարանէն հրատարակուած ընթերցարան մը տեսանք։

Բէթրօ—Երեստէֆ 1844ին Ձմեռնիկ Ս. Մարտիկեան վարժարանի նուիրած տպարանին յիշատակն ալ չունենանք։

Այժմ գործունէութեան մէջ կը գտնուին Պաղատարանի, Տէտեան եղբայրաց, Թաթիկեանի և Մանեանի գործարանները։

Թաթիկեան տպագրատունը՝ միանգամայն ընդարձակ վիճակագրուած ալ է, որ մեծ պատիւ կը բերէ Ձմեռնիկ վիճակին։

Տեղական ազգային հին և նոր թերթերու ցանկը մինչև տասներկուք կը յանդիս Երեւնի իւր ժամանակագրական կարգաւ։

Արալոյս, Արփի Արարատեան, Թուրքալ Հայկաղեան, Հայաստան, Փոռնի (զբաղիր), Մաղիկ, Միւթիւն—Սահմանադրական, Յաւերժահարս, Գարուն Հայաստանի, Դիմակ, Իրաւունք, Ա. Մամուլ։

Այս թերթերէն այժմ միայն առաջինն ու վերջինը կը հրատարակուին։

Ար—Մամուլ ամսօրեայ հիմալից և լուրջ հանդիսին այս տարուան շրջանին սկզբնաւորութիւնը—իւրեւ սահմանագրական թուական—յառաջակայ մայիսէն պիտի սկսուի շարունակուի։

Յաճախ գողութեան գէպեր կը պատահին։ Պերկամայէն Ձմեռնիկ գալու ձմեռուն վրայ՝ Սիւրիճիսարեան Սիրաքէֆէնտի իւր զուականերով մէկտեղ կը կողորպտուի Ձէպին ըսուած վրանաբնակ գողերէն։

Չտակի չորրորդ՝ Կարմիր—կիւրակէ օրը տօնական հանդէս մը կատարեցին խուռներամ տեղացի բարեպաշտ ժողովուրդը։

Երեստի աւերակաց մէջ տեղ մը ուրուած է, որ նոյն օրը փառաւոր վերանի մը տակ, շարժական վիճակ պատարագ կը մատուցանէն Այալընի և Գուլատայի երկու քահանայները՝ ի յիշատակ Ս. Յովհաննու Աւետարանչին։

Մանիսա՝ Խորոզ ըսուած դիւղը, տեղացիք Ձէքէզաց դէմ՝ բաւական մեծ կակ կուր մը ըրած են։

Տեղւոյն գողերէն Յճ հատի չափը դընտակի հարուածներով մեռեր են։

Տեղացի Հայ մը՝ իւր եղբորը քէնին առեւանդելով՝ քանի մ'օրէ ի վեր անյայտացած է։

Յունաց հիւանդանոցին այցելութիւն մը տուինք։ Անկեղծութեամբ կրտսմ, որ եթէ Ձմեռնիկ մէջ Յունաց ազգը՝ ժողովրդական և մարդասիրական հոյակապ համագործակցութեան մը ունի, այն ալ հիւանդարանին է։

Պ. Սոփոնիկ Պէրիճեան՝ հանրածանոթ գեղարուեստագէտը, Ձմեռնիկ իմ գտնուած Օթէլ կը գտնուի իւր մաշաղատունի մանկիկներով։

Փարիզի գեղարուեստական դործարանաւորներէն մէկուն կողմանէ յատկապէս կանչուած ըլլալով սա՛ առժամանակեայ կերպով հոս կը դառնայ։

Իւր պարագայ ժամերը՝ քաղաքիս զանազան գեղեցիկ դիրքերուն իւզաներկ պատկերները դժելով կանցունէ։

Պէրիճեանի տաղանդը՝ Ձմեռնիկացւոյ ալ անձանօթ է։ Քաղաքիս Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն արձանաձև փառաւոր խաչկալը՝ իւր մտաց կորովոյն նախապայքն է։

Պօսեցիք գիտեն որ Պէրիճեանի հանձարոյն խօսուն վկաններն են Սուրբ—Արիւր օրով շինուած շէնքերուն, և մանաւանդ Ձրաղանի պալատան մէջ գրանուած կարասիներուն և գեղարուեստական քանդակագործ իրեղինաց նուրբ գեղագրութիւններն ու հեղինակութիւնները։

Տաքա՛ն առնուած Պաղ—պօղոք գըրամարտիկներ՝ մեր համականին իրենց շաղկապի ճամբարակութեանց առարկայ ըրած են։

Այնպիսի անհեթեթ գրական ոչնչութեանց համար՝ արհամարհոտ թուք մը միայն ունի։ ...

Ձերդ.

Ա. Յ. Այալեան

Յ. Գ. Ձմեռնիկ փառաւորական այս չաբաթուան առեւտրական հրապարակը։ Մեքենայով մաքրուած բամպակին ընտիր տեսակին կենդիւնարը 345—360 դր։

Կը փնտռուին։

350 պալէ՝ ծախուեցաւ։

Ատանայի տեսակը՝ մինչև 325 դր փառաւորուցաւ։

Վայրի կաղինը (փալմուս) 6000 կենդիւնարի չափ սպառեցաւ։

Գերմանիային համար ալէկ տեսակէն Դէ Զար ըսուած ապրանքը՝ 105—120 դր։ Ուղ—Թիֆլիսէ տէ՛ կոչուած ապրանքը՝ մինչև 160 դր կրնայ ծախուի։

Բայց Անդրիկ համար հասարակ ապրանքները՝ 90—100 դր կը ծախուին. և Բէթ—Զար ըսուած ստորին ապրանքը՝ որ խոտիկ և Ռուսաստանի համար կը գընուին, կենդիւնարը՝ 45—58 դր, ըստ տեսակին։

Չի լուացուած բուրդ (Եփուր) չաբաթուս 290—300 դր ծախուեցաւ։

Այս փառաւորները՝ Կաթիլ ստակով կը փոխանակուին։

Քամեոյի ստակ կըսուի, լիւրան 118 դր 10 վրդ հաշուելով։

Արիօնի քէպոն ամեն մ'ի վեր թոյլ է։ Շարժուս 25 կողով միայն փառաւորուցաւ։

Քարահիսարի ըսուած ընտիր տարանքը, չէքին 126,5 դր կընէ։ Մէհարը 20 դրէն։

Նոյն

Ի Լ Ա Ն

Պիր սէնէ միւտտեթլէ շէրայիթի մալիւմէ իլէ այտա երեւ պին քըյէտէն երեւ էլլի պին քըյէյէ գատար ալընաճաք լաճմըն էամանը նիղամիյէ թախսիսթընա մահսուպէն մալիյէ խաղինէսինտէն Օսմանը ալթունը երեւ դը հիսապըլըս վիրիլէք իւղընէպէ հէր քըյէսի սէքիլ դրուչա թալիպի էօհսէսինտէ Երեւ իշպու հաղիրանըն պիրինճի փէնճէնպին կիւնիւնէ գատար պիլ միւնաքասա քարարը գաթիսի վերիլէճէք օլտընտան, օլ վէչհ իլէ լաճմ իթասընա թալիպ օլանլալըն շէրայիթը մուքալէլէյի անլայուպ անա կէօրէ միւնաքասատէ պուրուն մաք իւղըն պու կիւնտէն իթիպարէն Տարը Շուրայա միւրաճաաթ իյլէմէլէրի։

28 Մայիս 1878

Պասալ Սէրասքէրի

Պիր սէնէ իշուն ալընաճաղը տիկեր վարադա իլէ իլան օլունան լաճման պաշքա օլարաք թօքսան տէօրտ սէնէսի հաղիրան վէ թէմուղընտէ տէօրտէր երեւտէն սէքիլ երեւ պին քըյէյէ քատար լաճմըն էամանը մալիյէ խաղինէսինտէն քայիլէ երեւ դրուչ հիսապըլըս պէհէր քըյէսի իկիլմի իքիլ դրուչա օլմաք իւղըն թալիպի օլուպ իշպու հաղիրանըն պիրինճի փէնչ շէնպէհ կիւնիւնէ քատար պիլ միւնաքասա քարարը գաթիսի վիրիլէճէք օլտընտան, թալիպ օլանլալըն շէրայիթի մուքալէլէյի անլայուպ անա կէօրէ միւնաքասա իթիպարէն Տարը Շուրայա կէլմէլէրի։

Մայիս 28 1878

Պասալ Սէրասքէրի

